ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2014թ. թիվ 68-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻՆ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2014թ. հունվարի 31-ին թիվ 24-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2014 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. 2014 թվականի ապրիլ ամսվա ընթացքում Լոռու մարզի Լեռնապատ, Բազում, Դարպաս, Մեծ Պարնի, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Գեղասար, Ձրաշեն, Հարթագյուղ, Լեռնավան և Գոգարան համայնքներում անցկացնել շտաբային ուսումնավարժություններ «Ձրիեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով:

2. Ուսումնավարժությունների կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով սահմանել ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման ժամանակացույց՝ համաձայն հավելվածի:

3. Ուսումնավարժությունների ղեկավարներ նշանակել համապատասխան համայնքների ղեկավարներին:

4. Ուսումնավարժությունների անցկացման հսկողությունը դնել Լոռու մարզային փրկարարական վարչության պետի վրա:

5. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Սույն որոշումը տրամադրել վերը նշված համայնքների ղեկավարներին, նրանց ցուցաբերել գործնական և մեթոդական օգնություն շտաբային ուսումնավարժությունների նախապատրաստման և անցկացման գործում:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. փետրվարի 27
ք.Վանաձոր